# ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

## Համայնքային պաշտոնական համացանցային կայքէջերը՝ որպես տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետվողականության, հրապարակայնության և թափանցիկության սկզբունքների իրացման արդյունավետ միջոց

Տեղական ինքնակառավարման մարմինները (այսուհետև՝ ՏԻՄ) հանդիսանում են հանրային իշխանության այն օղակը, որի միջոցով ապահովվում է բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

ՀՀ սահմանադրությամբ[1] ամրագրված է, որ տեղական ինքնակառավարումը ՏԻՄ-երի իրավունքն ու կարողությունն է՝ համայնքի բնակիչների շահերից ելնելով, Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը:

Տեղական ինքնակառավարման սկզբունքներն իրենց իրավական ամրագրումն են ստացել «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայում» (այսուհետև՝ Խարտիա)[2], որն իրավական հիմք է հանդիսացել Եվրոպայի խորհրդի անդամ երկրների՝ այդ թվում և Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման օրենսդրության համար: Համաձայն Խարտիայի 2-րդ հոդվածի՝ տեղական ինքնակառավարման սկզբունքը պետք է ճանաչված լինի ներպետական օրենսդրությունում և, հնարավորինս, երկրի Սահմանադրությունում:

Տեղական ինքնակառավարման սկզբունքները կարևոր նշանակություն ունեն ՏԻՄ-երի արդյունավետ գործունեության իրականացման գործընթացում, հիմք են հանդիսանում բնակչության կողմից ընտրված ՏԻՄ-երի միջոցով համայնքների կառավարման կազմակերպման համար:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի[3] 8-րդ հոդվածով ամրագրված է, որ ՀՀ-ում երաշխավորվում է տեղական ինքնակառավարումը՝ որպես ժողովրդավարության էական հիմքերից մեկը: Նույն հոդվածով թվարկված սկզբունքներից է ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականության, հրապարակայնության և թափանցիկության սկզբունքը, որը ոչ միայն տեղական ինքնակառավարման բարելավման կարևոր նախապայման է, այլ նաև համայնքի բնակիչների վստահության և ակտիվ մասնակցության խթանման հիմնական գործոն: Հարկ է նշել, որ ՏԻՄ-երի գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է այս սկզբունքի իրացումից:

ՏԻՄ-երի հաշվետվողականությունը, հրապարակայնությունը և թափանցիկությունը փոխկապակցված և միմյանց լրացնող սկզբունքներ են: Առանց հրապարակայնության սկզբունքի հաշվետվողականությունը դառնում է ձևական, իսկ առանց թափանցիկության սկզբունքի հրապարակված տեղեկատվությունը կարող է լինել թերի կամ ոչ հասկանալի: Միայն այս երեք սկզբունքների համատեղ և հետևողական կիրառման դեպքում է հնարավոր ապահովել ՏԻՄ-երի արդյունավետ, պատասխանատու և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված գործունեություն:

**Հաշվետվողականության սկզբունքը** ենթադրում է ՏԻՄ որոշումների, իրականացրած ծրագրերի և դրանց արդյունքների վերաբերյալ համայնքի բնակիչներին, շահագրգիռ անձանց

---

[1] https://www.arlis.am/hy/acts/143723
[2] https://www.arlis.am/hy/acts/80563/latest
[3] https://www.arlis.am/hy/acts/219062

հաշվետու լինելու պարտավորություն: ՀՀ սահմանադրությամբ և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով ամրագրված է համայնքի ղեկավարի և ավագանու գործունեության մասին համայնքի բնակիչներին հաշվետու լինելու լիազորությունը: Համայնքի ղեկավարը հանրությանն ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում ավագանու, իր գործունեության և համայնքի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին: Այդ հաշվետվությունները տեղադրվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

Գործնականում հաշվետվողականությունը կարող է դրսևորվել համայնքի ղեկավարի կողմից տարեկան և միջանկյալ հաշվետվությունների, համայնքային բյուջեի կատարման, ինչպես նաև համայնքի զարգացման ծրագրերի իրականացման ընթացքի մասին տեղեկատվության մատչելի ներկայացմամբ: Մինչդեռ հաշվետվողականության թերի, ոչ լիարժեք, ձևական ներկայացումը կարող է հանգեցնել տեղական ինքնակառավարման համակարգի արժեզրկմանը և կոռուպցիոն ռիսկերի բարձրացմանը:

**Հրապարակայնության սկզբունքը ենթադրում է** ՏԻՄ-երի գործունեության մասին համայնքի բնակիչների իրազեկվածության ապահովում: Ավագանու բաց նիստերի անցկացումը, համայնքային պաշտոնական կայէջում օրակարգերի և ընդունված որոշումների հրապարակումը, հանրային բաց լսումների և քննարկումների կազմակերպումը նպաստում են համայնքի բնակիչների մասնակցության ապահովմանը տեղական ինքնակառավարմանը: Հրապարակայնության սկզբունքը կարևոր նշանակություն ունի նաև հանրային վերահսկողության տեսանկյունից: Երբ տեղեկատվությունը հասանելի է, համայնքի բնակիչները կարող են գնահատել ՏԻՄ-ի գործունեության արդյունավետությունը, բարձրացնել խնդիրներ և առաջարկել լուծումներ ի նպաստ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման:

**Թափանցիկության սկզբունքը** ենթադրում է ՏԻՄ-երի կողմից ընդունվող որոշումների, իրականացվող ծրագրերի և ծախսվող ֆինանսական միջոցների վերաբերյալ ամբողջական, ժամանակին և հասկանալի տեղեկատվության հրապարակում: Թափանցիկ կառավարման պայմաններում որոշումների ընդունման ընթացակարգերը, չափանիշները և հիմնավորումները պետք է հասանելի լինեն համայնքի բնակիչների համար: Թափանցիկության ապահովման կարևոր գործիքներից են համայնքային պաշտոնական համացանցային կայքէջերը, որոնք ծառայում են որպես հանրության հետ հաղորդակցության, տեղեկատվության մատչելիության և մասնակցային կառավարման հարթակներ: Հատկապես կարևորվում է համայնքային կայքէջերում ՏԻՄ իրավական ակտերի, բյուջետային փաստաթղթերի, մրցույթների և գնումների, մասնակցային բյուջետավորման գործընթացների, համայնքային զարգացման և ռազմավարական ծրագրերի վերաբերյալ տվյալների ամբողջական փաթեթներով հրապարակումը: ՏԻՄ գործունեության թափանցիկության բարձր մակարդակը նպաստում է հանրային վստահության աճին և համայնքի բնակիչների ակտիվ ներգրավմանը տեղական ինքնակառավարման գործընթացներում:

Չնայած ՀՀ ներպետական օրենսդրական դաշտը, մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքներն ամրագրում են հանրային տեղեկատվության մատչելիության ապահովման գործում ՏԻՄ-երի պարտավորությունը, սակայն գործնականում հաճախ առկա են խնդիրներ՝ կապված համայնքային պաշտոնական կայքէջերում տեղեկատվության ոչ ամբողջական հրապարակման հետ: Հաճախ համայնքային պաշտոնական կայքէջերում հրապարակվում են միայն որոշման տեքստերը առանց հավելվածների կամ ոչ ամբողջական փաթեթով, որը սահմանափակում է հանրային վերահսկողության հնարավորությունը, խաթարվում է բնակիչների տեղեկատվություն

ստանալու իրավունքի իրացումը, բնակիչները չեն կարողանում հասկանալ որոշման իրական ազդեցությունը։

Համայնքային առանձին կայքէջերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հաճախ իրավական ակտերը հրապարակվում են առանց կից հավելվածների, բյուջետային և ֆինանսական տեղեկատվությունը հանրությանը ներկայացվում է բարդ և ոչ հասկանալի ձևով։

Համայնքային պաշտոնական համացանցային կայքէջերը երկրորդական կամ ձևական գործիք չեն։ Դրանք ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականության, հրապարակայնության, թափանցիկության և մասնակցային կառավարման առանցքային հարթակներ են, որոնց պատշաճ գործարկումն ու զարգացումը ոչ միայն ՏԻՄ-երի իրավական պարտավորությունն է, այլ նաև արդյունավետ և վստահելի տեղական ինքնակառավարման նախապայման է։ Հետևապես համայնքային պաշտոնական համացանցային կայքէջերը պետք է լինեն ՏԻՄ-երի գործունեության հաշվետվողականության, հրապարակայնության և թափանցիկ աշխատելաոճի հիմնական գործիքը։ Դրանց արդյունավետ կիրառումը ոչ միայն կբարձրացնի հանրային վստահությունը, այլև կնպաստի տեղական ժողովրդավարության և մասնակցային կառավարման զարգացմանը։

**Մանուշ Նալբանդյան**

**«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ**

**Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղի իրավաբան**

**08.01.2026թ.**